ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 մարտի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

35
(2701)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ ՔՊ-Ի ՀԵՏ ԴԱՇԻՆՔԸ

«Լուսավոր Հայաստան» կուսակցության քաղաքապետի թեկնածու Դավիթ Խաժակյանը չի բացառում, որ Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցեն ՔՊ թեկնածու Տիգրան Ավինյանի հետ դաշինքով:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Դավիթ Խաժակյանն ասաց, որ ՔՊ-ի հետ դաշինքով մասնակցելու վերաբերյալ քննարկում չեն ունեցել, բայց նաեւ չբացառեց, որ նման որոշում կայացնեն. «Նման քննարկում չի եղել «Լուսավոր Հայաստան» կուսակցության մեջ, տեղեկություն չունեմ՝ ՔՊ-ում նման հարց քննարկել են, թե ոչ: Եղել է քննարկում, որ մենք շատ արդյունավետ այս մեկ տարին անցկացրինք: Դրա վառ վկայությունն այն է, որ 2022թ.-ի բյուջեի կատարողականը ամենաբարձր ցուցանիշն է գրանցել վերջին 6 տարիներին. դա համատեղ աշխատանքի արդյունք էր՝ մեր՝ որպես ընդդիմության, իրենց՝ որպես իշխանության. սրա շուրջ է եղել քննարկում, այլ հարցի շուրջ քննարկումներ չեն եղել: Ընտրություններն էլ սեպտեմբերին են, եւ որեւէ ուժ չկա, որն այս պահին կքննարկի դաշինքի հարց 6-7 ամիս հետո տեղի ունեցող իրադարձությունների մասին»:

Մեր հստակեցնող հարցին՝ բացառում է արդյոք ՔՊ-ի հետ դաշինքը, Դավիթ Խաժակյանն ասաց, որ չի կարող բացառել, քանի որ նրանց հետ համատեղ անցած ճանապարհ ունեն. «Մենք ունենք համատեղ աշխատանքի փորձ: Ես կարող եմ ասել է՝ ում հետ ենք բացառում որեւէ համագործակցություն՝ բոլոր այն ուժերի հետ, որոնք ընտրությունները պատկերացնում են ոչ քաղաքական գործընթաց, առեւտրի առարկա կամ փող բաժանելու միջոց. այս ուժերի հետ հստակ բացառում ենք համագործակցությունը, իսկ այն ուժերը, որոնց հետ անցած քաղաքական ճանապարհ ունենք, նրանց հետ համագործակցությունը կարող է տարբեր ֆորմատներում տարբեր ձեւեր ստանալ, ուստի ես այս գլխից դա բացառել չեմ կարող»,- ասաց Խաժակյանը:

Արտակարգ իրավիճակների նախարարությունը դեռեւս 2 ամիս կշարունակի գոյություն ունենալ, մինչեւ Ներքին գործերի նորաստեղծ նախարարության վրջնական կազմավորումը չավարտվի: Ինչպես Փաշինյանն էր ասում, գործընթացն արվում է անցումն անցնցում ապահովելու համար: Եվ, ահա, ԱԻՆ նախկին նախարար Արմեն Փամբուխչյանը դեռեւս չգիտի, թե պաշտոնանկությունից հետո Փաշինյանն իրեն ինչ պաշտոն կառաջարկի: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ ՔՊ-ի ներսում արդեն խոսակցություններ կան, որ վարչապետը Փամբուխչյանին կտանի կառավարություն՝ որպես իր խորհրդական , մինչեւ նրա համար նոր՝ առավել հարմար պաշտոն կգտնեն:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը արգելել է իր հարազատներին գնալ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ կամ, այսպես ասած, «ԿԳԲ-ի պադվալ» եւ տեսակցել իրեն: Բանն այն է, որ իրավապահ համակարգը թույլ է տվել, որ միայն պաշտպանության նախկին նախարարի մերձավոր հարազատները հնարավորություն ունենան տեսակցելու նրան, սակայն Տոնոյանը հարազատներին արգելել է իրեն տեսակցության գալ: Նշենք, որ «Անպիտան հրթիռների» գործով ավելի քան չորսուկես միլիոն դոլար յուրացնելու համար մեղադրվող պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանն արդեն մեկ տարի չորս ամիս կալանավայրում է: Մինչ օրս արգելված էր նրա որեւէ հարազատի տեսակցել Տոնոյանին: Այժմ արգելանքը վերացված է միայն մերձավոր հարազատների դեպքում:



Հայաստանը լրտեսական ծրագրեր կիրառող երկրների շարքում է: Հայաստանի կառավարությունն իր ընդդիմախոսներին հետեւելու համար լրտեսող ծրագրեր է կիրառել: Այս մասին վկայում է նաեւ Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության կողմից երեկ հրապարակված «Ազատությունն աշխարհում 2023» տարեկան զեկույցը: Freedom house-ն իր զեկույցում հիշեցրել է, որ դեռեւս 2022թ-ի մայիսին Google-ի սպառնալիքների վերլուծության խումբը (TAG) Հայաստանի կառավարությանը կապել էր մակեդոնական Cytrox ընկերության կողմից ստեղծված Predator լրտեսող ծրագրերի օգտագործման հետ: Cytrox ընկերության Predator ծրագիրը թիրախավորում է մարդկանց՝ տվյալներ հավաքելու, մանիպուլյացիայի ենթարկելու եւ նրանց սարքերն ու ինտերնետային հաշիվները շարքից հանելու նպատակով: Զեկույցում նշվում է, որ լրտեսող ծրագրերը օգտագործվել են մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, լրագրողների, այլախոհների եւ իրավապաշտպանների թիրախավորման համար: Հիշեցնենք, որ դեռ 2021թ-ին «Հայրենիք» կուսակցության ղեկավար Արթուր Վանեցյանն էր հայտարարել, որ մեկ այլ լրտեսող ծրագրով՝ Pegasus ծրագրով, գաղտնալսել են իր եւ իր ընտանիքի անդամների բջջային հեռախոսները:

ԿԵՂԾ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ

ՆՇԱՁՈՂԻ ԻՋԵՑՄԱՆ ԹԵԶՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի շուրջ տեղի ունեցող բանակցությունների վերաբերյալ զրուցել է «Հայրենիք» կուսակցության խաղխորհրդի անդամ, բանակցությունների փորձագետ Խաչիկ Գալստյանի հետ:

-Պարոն Գալստյան, Բեռլինում Նիկոլ Փաշինյանի հետ բանակցությունների ավարտին՝ համատեղ մամուլի ասուլիսում, խոսելով հայ-ադրբեջանական կարգավորումից, Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը հայտարարեց, որ անհրաժեշտ է հասնել խաղաղ հանգուցալուծման՝ Հայաստանի եւ Ադրբեջանի տարածքային ամբողջականության, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիների ինքնորոշման տեսանկյունից, ընդ որում՝ այս բոլոր սկզբունքները հավասարազոր են:

-Արեւմտյան տարբեր հարթակներ երբեմն օգտագործում են այդպիսի կեղծ կատեգորիաներ զուտ կոնֆլիկտներն ու հակամարտությունները ավելի սրելու համար: Իհարկե, մի կողմից կարելի է կառչել ցանկացած հայտարարությունից, որոնք Արցախի ինքնորոշման մասին են, մյուս կողմից էլ՝ եթե կան այդպիսի հայտարարություններ, եւ այդ գիծն իրականում եվրոպացիների համար հիմնական ուղենիշներից մեկն է, նշանակում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է վստահ գործեն եւ պահանջատեր լինեն, բայց կրկնում եմ՝ նման հայտարարություններն ինձ համար հուսադրող կամ ուղենիշային չեն, քանի որ ավելի շատ ուղղված են աշխարհաքաղաքական հակամարտություն բորբոքելու եւ հայկական քաղաքական ու հասարակական դաշտը հակառուսականությամբ լցնելուն:

-Պարոն Գալստյան, մինչ եվրոպական տարբեր երկրներ ակնարկում են Արցախի ինքնորոշման իրավունքի մասին, հիշում ենք, որ նախորդ տարի Նիկոլ Փաշինյանն ԱԺ ամբիոնից հայտարարեց, թե միջազգային հանրությունը Հայաստանից պահանջում է իջեցնել Արցախի կարգավիճակի նշաձողը. ինչպե՞ս կմեկնաբանեք սա:

-Ե՛ւ եվրոպական, ե՛ւ ռուսական հարթակներից պարբերաբար խոսվում էր այն մասին, որ արցախյան կոնֆլիկտը կարգավորված չէ: Կա նույնիսկ կարգավիճակի խնդիր, որն այժմ լուծելու պատեհ առիթը չէ, բայց այն անպայմանորեն բաց է մնում եւ պետք է տեղափոխվի հաջորդ քննարկումների դաշտ: Հայաստանի իշխանությունները միշտ ցանկանում են ազատվել արցախյան հիմնահարցից, փորձում են այն դուրս թողնել Հայաստանի ներքաղաքական օրակարգից: Իսկ նշաձողի իջեցման կեղծ թեզն անընդունելի է, ասեմ ավելին՝ եւ՛ ռուսական, եւ՛ եվրոպական բոլոր հարթակներում այս իշխանությունները, հրապարակավ բանակցելով, միեւնույն ժամանակ նրանք նաեւ ուղիղ կապ ունեն Ադրբեջանի իշխանությունների հետ, իսկ միջազգային հանրության հետ բանակցությունների հարթակն օգտագործում են Ադրբեջանի հետ ներքին պայմանավորվածությունները միջազգային լեգիտիմությամբ ապահովելու համար: Այս իշխանությունները ուղիղ համագործակցում են ադրբեջանական իշխանությունների հետ: Ադրբեջանն այսօր որպես հաղթած պետություն է դիրքավորվել, իսկ հաղթողների ողորմածությանը հանձնվելը, այն էլ՝ քո դարավոր հակառակորդների, ճիշտ չէ: Առհասարակ, Հայաստանի իշխանությունները թողել են Արցախի 120.000 արցախցիներին անելանելի վիճակում, որպեսզի նրանք ուղղակիորեն թողնեն ու հեռանան իրենց հայրենիքից կամ էլ հանձնվեն Ադրբեջանի ողորմածությանը, բայց այս անգամ միջազգային որեւէ երաշխիք չկա արցախցիների անվտանգության ապահովման համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՆԻՍՏԸ ՏԵՒԵՑ 7 ՐՈՊԵ

Կառավարության նիստը երեկ բավական կարճ տեւեց՝ մոտ 7 րոպե:

Նիստի ընթացքում Նիկոլ Փաշինյանը միայն անդրադարձավ Արցախում տիրող իրավիճակին եւ ադրբեջանական վերջին դիվերսիային, ինչի հետեւանքով արցախցի երեք ոստիկան էր զոհվել:

Փաշինյանը այս միջադեպը որակեց Ադրբեջանի կողմից իրականացված ահաբեկչական ակտ:

Ըստ Փաշինյանի՝ Ադրբեջանի նպատակը ԼՂ-ի հետ բանակցությունների վիժեցումը եւ ռազմական սադրանքի ֆոն ստեղծելն է:

Վարչապետը շեշտեց, որ այս իրավիճակում հրատապ է դառնում ԼՂ եւ Լաչինի միջանցք անհապաղ միջազգային փաստահավաք առաքելության գործուղման անհրաժեշտությունը:

Կառավարության նիստում Նիկոլ Փաշինյանի ելույթից թերեւս կարելի է արձանագրել, որ հատկապես Արցախի շուրջ բանակցությունների մասով մեր վիճակը, մեղմ ասած, ոչ հուսադրող է. բանակցությունները գնալով փակուղի են մտնում:

Արցախի վերաբերյալ Փաշինյանի դիտարկումներից հետո կառավարության նիստն ավարտվեց, վարչապետի առաջարկությամբ բոլորը հարցերը քննարկվեցին չզեկուցվող ընթացակարգով:

ԱԺ ՆԻՍՏԵՐԻ ՄԵԿՆԱՐԿ

ԱԺ նիստերի մեկնարկին ընդառաջ՝ գլխադասային հանձնաժողովները հաջորդ շաբաթ նիստեր կգումարեն:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ երկուշաբթի օրվանից նիստեր կգումարեն հետեւյալ հանձնաժողովները.

- մարտի 13-ին՝ ժամը 10:00-ին, նիստ կգումարի ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը,
- Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը նիստ կգումարի մարտի 13-ին՝ ժամը 10:00-ին,
- Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նիստը տեղի կունենա մարտի 13-ին՝ ժամը 15:00-ին,
- մարտի 15-ին՝ ժամը 11:00-ին, կկայանա Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստը:

Նշենք, որ ԱԺ հերթական նիստերը կգումարվեն մարտի 21-ից:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երկուշաբթի օրը նախարարներից մի քանիսը գալու են խորհրդարան:

Մեր տեղեկություններով՝ ԱԺ են գալու ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը եւ արտգործնախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը: Ի սկզբանե նախատեսված է եղել, որ հենց Արարատ Միրզոյանն է գալու ԱԺ, սակայն վերջինս այդ օրերին այլ հանդիպումների է մասնակցելու:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ ԱԺ-ում նախ քննարկվելու է նախարարությունների բյուջեի կատարողականը, որը լինելու է բաց:

Քննարկումից հետո փոխարտգործնախարարի հետ հնարավոր է լինի նաեւ փակ քննարկում՝ երկրում ստեղծված իրավիճակի հետ կապված:

ՆՈՐ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԳԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Ապրիլի 2-5-ը Հայաստանի Հանրապետություն կժամանի Լեհաստան-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Ռադոսլավ ՖՈԳԻԵԼԻ գլխավորած պատվիրակությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պատվիրակությանը դիմավորելու է ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանը:

ԱԺ նախագահի կարգադրության համաձայն՝ պատվիրակության ընդունելությունը կկազմակերպվի Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին:

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԴԵՄ

ԱՄՆ-ի ֆինանսների նախարարությունը պատժամիջոցներ է սահմանել Իրանի մի շարք պաշտոնյաների եւ կազմակերպությունների նկատմամբ կանանց իրավունքները խախտելու համար: «Այսօր Ֆինանսների նախարարության օտարերկրյա ակտիվների վերահսկման վարչությունը (OFAC) պատժամիջոցներ է սահմանել իրանական ռեժիմի մի քանի պաշտոնատար անձանց ու կազմակերպությունների, այդ թվում՝ Իրանի բանտային համակարգի երկու բարձրաստիճան աշխատակիցների դեմ, որոնք պատասխանատու են եղել կանանց եւ աղջիկների նկատմամբ մարդու իրավունքների լուրջ խախտումների համար»,- ասվում է գերատեսչության հաղորդագրության մեջ: Հստակեցվում է, որ Ֆինանսների նախարարությունը միջոցներ է ձեռնարկել Իրանի բանակի գերագույն հրամանատարի եւ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) բարձրաստիճան ղեկավարի, ինչպես նաեւ իրանցի մի պաշտոնյայի դեմ, որը «կենտրոնական դեր է խաղացել ռեժիմի կողմից համացանց մուտքն արգելափակելու գործում»: Բացի այդ, պատժամիջոցների տակ են հայտնվել իրանական երեք ընկերություններ եւ դրանց ղեկավարներն այն բանի համար, որ նրանք նպաստել են «Իրանի իրավապահ մարմինների կողմից խաղաղ ցուցարարների, այդ թվում՝ բազմաթիվ կանանց եւ աղջիկների նկատմամբ խիստ բռնաճնշումներին»: «Սա OFAC-ի պատժամիջոցների տասներորդ փուլն է՝ ուղղված իրանական ռեժիմի դեմ 2022 թ.-ի սեպտեմբերին համազգային բողոքի ցույցերի սկսվելուց ի վեր խաղաղ ցուցարարների նկատմամբ բռնաճնշումների եւ Իրանի ժողովրդին գլոբալ ինտերնետի հասանելիությունից զրկելու համար»,-ասվում է գերատեսչության հաղորդագրության մեջ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունում մարտի 9-ին հյուրընկալվեց ՌԴ Թաթարստանի Հանրապետության արդյունաբերական կլաստերի պատվիրակությունը՝ վարչության նախագահ Սերգեյ Մայորովի գլխավորությամբ: Կառույցն ամենախոշորն է Ռուսաստանի 48 համանման կլաստերների մեջ՝ իր 300-ից ավելի ընկերություններով, 25 երկրներ ներկայացնող 500-ից ավելի կազմակերպությունների հետ համագործակցության համաձայնագրերով: Ներկայացնելով Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության գործունեության ուղղությունները՝ ՀԱԳՄ նախագահի տեղակալ Արմեն Մարտիրոսյանն անդրադարձավ նաեւ տարբեր երկրների հետ Միության կողմից իրականացվող համագործակցությանը, երկկողմ համատեղ ծրագրերի հնարավոր ուղղություններին: Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության ու ՌԴ Թաթարստանի Հանրապետության արդյունաբերական կլաստերի միջեւ ստորագրվեց Համագործակցության համաձայնագիր, որով կողմերը մասնավորապես պայմանավորվում են իրականացնել առեւտրային, տեխնիկական եւ համապատասխան տեղեկությունների պարբերական փոխանակում, կազմակերպել համատեղ միջոցառումներ, իրականացնել խորհրդատվական եւ աջակցության ծառայություններ:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԱԼԻԵՎԻ ՆՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղվում բացվել է 10-րդ գլոբալ համաժողովը, որի նշանաբանն է «Աշխարհն այսօր. մարտահրավերներ եւ հույսեր»:

Համաժողովին մասնակցում են մի շարք օտարերկրացի գործող եւ պաշտոնաթող բարձրաստիճան ղեկավարներ, հանրային եւ քաղաքական հայտնի դերակատարներ, փորձագետներ, Առողջապահության համաշխարհային կազմակերպության ամբողջ ղեկավար կազմը, Արաբական պետությունների լիգայի եւ միջազգային այլ կառույցների ներկայացուցիչներ:

Ինչպեսեւ ենթադրվում էր, նախագահ Իլհամ Ալիեւը բացման ուղերձում հիմնականում խոսել է ադրբեջանահայկական հակամարտության կարգավորման իր տեսլականի մասին:

Թերեւս հաշվի առնելով միջոցառման ներկայացուցչական բարձր աստիճանը՝ նա խուսափել է չափազանց ագրեսիվ ավանդական բառապաշարից ու Հայաստանի հասցեին սպառնալիքներից եւ ավելի շատ փորձել է ներկայանալ որպես խաղաղության գաղափարի ջատագով:

Նա ասել է, թե հակամարտությունները հնարավոր է լուծել երկու եղանակով՝ բանակցելով կամ ուժով: Նա հավաստիացրել է, որ Ադրբեջանն ի սկզբանե խաղաղ կարգավորման կողմնակից է եղել, բայց, Ալիեւի որակմամբ, Հայաստանը դա չի գնահատել եւ մերժել է խաղաղության հնարավորությունը: Ալիեւը հերթական անգամ քննադատել է Մինսկի խմբի գործունեությունը:

Ալիեւը հայտարարում է՝ Բաքուն կընդդիմանա ԵԱՀԿ ՄԽ-ն վերակենդանացնելու փորձերին:

«1992-ին, հենց ծագել է կոնֆլիկտը, ԵԱՀԿ-ն Մինսկի խումբն է ստեղծել, բայց այն 28 տարվա ընթացքում ոչ մի արդյունք չի ահապովել, եւ մենք համոզվել ենք, որ խումբը ցանկանում է առհավետ սառեցնել այդ հակամարտությունը»,- ասել է Ալիեւը:

Նրա փոխանցմամբ՝ Ադրբեջանը չէր կարող մերվել նման իրավիճակի հետ եւ ստիպված էր ուժով լուծել հակամարտությունը:

«Մենք արել ենք այն, ինչ ճիշտ ենք համարել, դիմել ենք ինքնապաշտպանության՝ գործադրելով ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ դրույթը, եւ ազատագրել ենք մեր տարածքները»,- ասել է Ալիեւը:

Ապա Ադրբեջանի ղեկավարը խոսել է խաղաղության հեռանկարի մասին՝ նշելով, որ Հայաստանի հետ խաղաղություն հաստատելու խոչընդոտներ չկան:

«Հայաստանը բաց է թողել հիրավի անկախ պետություն դառնալու շանսը եւ վերածվել է մի երկրի, հիմա գուցե արդեն մի քանի երկրների գաղութի»,- ասել է Ալիեւը՝նշելով, որ գուցե այս անգամ Հայաստանն, այնուամենայնիվ, կփորձի օգտվել խաղաղություն հաստատելու հնարավորությունից եւ «կսկսի գործել իբրեւ հարեւան»:

Իլհամ Ալիեւը նաեւ «լուսավոր ապագա» է խոստացել Ադրբեջանի կողմից երեք ամիս շրջապատման մեջ գտնվող հայերին՝ ասելով, որ նրանք, իբր, լավ կապրեն:

«Ես համոզված եմ, որ Ադրբեջանի Ղարաբաղի շրջանում ապրող հայերի կյանքը շատ ավելի լավը կլինի, քան օկուպացիայի տարիներին»,- ասել է Իլհամ Ալիեւը:

Իսկ Ստեփանակերտի ու Բաքվի միջեւ երկխոսության համար Հայաստանի վարչապետը դարձյալ անհրաժեշտ է համարում միջազգային հուսալի մեխանիզմների ստեղծումը:

Նիկոլ Փաշինյանը կառավարության նիսում այդ մասին հայտարարեց՝ առանց հստակեցնելու, թե խոսքը կոնկրետ ինչի մասին է, որ պետության կամ միջազգային կառույցների միջոցով է ստեղծելու այդ մեխանիզմն ու ինչպես:

«Կարծում եմ՝ անհրաժեշտ է հուսալի միջազգային մեխանիզմներ ստեղծել, որ Բաքու ու Ստեփանակերտ անխափան եւ ինստիտուցիոնալ խոսակցություն տեղի ունենա: Եվ սա վերը հիշատակված միջազգային պայմանավորվածության իրացման արդյունավետ երաշխիք կարող է դառնալ», - ասաց Փաշինյանը:

Ն.Հ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԿԱՀԻՐԵՈՒՄ

ԱՊԼ խորհրդի նախարարական նիստի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Կահիրեում մարտի 8-ին հանդիպել է Լիբանանի ԱԳ նախարար Աբդալլահ Բու Հաբիբի հետ:

ԱԳ նախարարները պատրաստակամություն են հայտնել շարունակել համատեղ ջանքերը կրթության, գիտության, մշակույթի եւ այլ բնագավառներում նոր նախաձեռնությունների իրականացման ուղղությամբ:

Հանդիպման օրակարգում են եղել նաեւ տարածաշրջանային անվտանգության եւ կայունության հարցեր:

Հարավային Կովկասում ստեղծված անվտանգային իրավիճակի եւ առկա մարտահրավերների համատեքստում նախարար Միրզոյանն անթույլատրելի է համարել Ադրբեջանի կողմից կրոնական գործոնի շահարկումները, ինչպես նաեւ Հայաստանի եւ հայ ժողովրդի ու արաբական աշխարհի միջեւ ավանդական ջերմ հարաբերությունները խաթարելու անհիմն փորձերը:

Անդրադառնալով Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամին՝ Արարատ Միրզոյանն ընդգծել է փետրվարի 22-ին Արդարադատության միջազգային դատարանի կողմից Ադրբեջանի նկատմամբ հրատապ միջոցների կիրառման վերաբերյալ կայացված որոշման կյանքի կոչման հրամայականը:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿՈՉ

ԱՄՆ կոնգրեսական Բրեդ Շերմանը Ներկայացուցիչների պալատի արտաքին գործողությունների հատկացումների ենթահանձնաժողովի լսումների ժամանակ կոչ է արել 2024 ֆինասնական տարում ուղիղ մարդասիրական օգնություն տրամադրել Ադրբեջանի շրջափակման մեջ գտնվող արցախցիներին:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ Բրեդ Շերմանը լսումների ժամանակ հայտարարել է, որ հայերը հազարավոր տարիներ ապրել են այդ տարածաշրջանում, որն Իոսիֆ Ստալինը «չարամտորեն» դարձրեց Ադրբեջանի մաս:

«Դրա հետեւանքը սարսափելի հակամարտությունն էր, այդ թվում՝ այժմ այդ տարածաշրջանում ապրող հայերի՝ 3 ամսվա շրջափակումը: Նրանք մարդասիրական օգնության խիստ կարիք ունեն, եւ ես հուսով եմ, որ դուք մեծահոգի կգտնվեք եւ մարդասիրական օգնություն կտրամադրեք Արցախի ժողովրդին»,- ասել է կոնգրեսականը:

Ինչպես ավելի վաղ հայտնել էր «Արմենպրես»-ը, ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնը կոչ է արել Ներկայացուցիչների պալատի իր գործընկերներին 100 միլիոն դոլար հատկացնել Հայաստանին եւ 50 միլիոն դոլար՝ Արցախին:

ՄԱՀՎԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

ԶԻՆՎՈՐԻՆ ԳՏԵԼ ԵՆ ՄԱՀԱՑԱԾ

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում պարզվում են ժամկետային զինծառայող Անդրանիկ Օհանյանի մահվան հանգամանքները:

2023թ. մարտի 8-ին ՀՀ ՊՆ ՌՈ Բերդի բաժնից հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը զինավանի հավաքակայանի հարակից անտառում հայտնաբերվել է ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Անդրանիկ Կարոյի Օհանյանի դին՝ծառից կախված վիճակում: Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 522-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ կատարվում է նախաքննություն: Նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն, հարցաքննվել են զորամասի մի շարք զինծառայողներ ինչպես սպայական կազմից, այնպես էլ համածառայակիցներ: Զեռնարկվում են անհրաժեշտ եւ անհետաձգելի բոլոր միջոցառումները կատարվածի հանգամանքները լիարժեք պարզելու նպատակով:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ինքնասպան եղած զինվորը Սյունիքի մարզի Խնածախ համայնքից էր, 19 տարեկան էր:

ArmLur.am-ի հետ զրույցում Խնածախի վարչական ղեկավար Սեյրան Միրզոյանը պատմեց, որ Անդրանիկ Օհանյանը գյուղի ակտիվ երիտասարդներից էր, ուներ հայր, մայր, քույր եւ եղբայր:

Համայնքապետի խոսքով՝ Անդրանիկը միջին ապրուստով ապրող ընտանիքից էր, անասնապահությամբ էր զբաղվում:

Տղայի ծառայությանը մնացել էր 6 ամիս. «Շատ նորմալ ու լուրջ տղա էր, ակտիվ, որեւէ խնդիր չի ունեցել, մասնակցում էր գյուղում կազմակերպվող միջոցառումներին»:

Նախաքննական մարմինը դեպքից հետո առգրավել է զինվորի հեռախոսը, որտեղ եղել են զինվորի եւ նրա ընկերուհու խոսակցություններն ու նամակագրությունները:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները հարցաքննել են զինվորի քրոջը: Վերջինս պատմել է, որ դեպքից առաջ եղբայրը զանգահարել է իրեն եւ ասել է, եթե իր հետ որեւէ բան պատահի, չմեղադրեն իր նախկին ընկերուհուն եւ նրան նեղություն չտան:

Զինվորի քույրը իրավապահներին հայտնել է, որ եղբոր այս խոսքերին լուրջ չի վերաբերվել, քանի որ եղբայրը մինչ բանակ գնալն էլ վիճել է ընկերուհու հետ, նորից ասել էր, որ վերջ կտա իր կյանքին:

Նշենք, որ 4 ամսից զինվորը ավարտում էր իր ծառայությունը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ Է ԼՐԱՑՎՈՒՄ

Մաքսային բարեփոխումների շրջանակում, կառավարության որոշմամբ, կատարվել է փոփոխություն երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների՝ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպման գործառնություններում: Միեւնույն տրանսպորտային միջոցով տարբեր առաքողներից տարբեր ստացողների անունով փոխադրվող ապրանքները ՀՀ սահմանային մաքսային մարմնից ՀՀ ներքին մաքսային մարմին տեղափոխելու համար այժմ լրացվում է մեկ տարանցման հայտարարագիր: Որոշման պահանջները ուժի մեջ մտնելուց հետո սահմանային մաքսակետերում էապես կրճատվել է ապրանքների մաքսային ձեւակերպումների վրա ծախսվող ժամանակը, ինչի արդյունքում նվազել են նաեւ հերթերը:

Այսպես, Արեւելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնում, հավաքական բեռների համար մեկ տարանցիկ հայտարարագիր ներկայացնելով, լրացման ժամկետի արդյունավետությունը բարձրացել է 2- ից 2.5 անգամ: Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ փետրվարի 24-ից մինչեւ մարտի 3-ը, ձեւակերպվել է 1270 տարանցման հայտարարագիր, որով սպասարկվել են 1270 բեռնատար տրանսպորտային միջոց եւ 2170 տնտեսվարող սուբյեկտ: Իսկ որոշմանը նախորդող նույն ժամանակահատվածում ձեւակերպվել է 1744 տարանցման հայտարարագիր, որով սպասարկվել է 895 տրանսպորտային միջոց: Հյուսիսային մաքսատուն-վարչության Բավրայի մաքսային կետ-բաժնում մեկ տրանսպորտային միջոցով տեղափոխվող ապրանքների ձեւակերպումների վրա սահմանային մաքսային մարմնում ծախսվող ժամանակը կրճատվել է 40-ից 50 տոկոսով: Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ փետրվարի 24-ից մինչեւ մարտի 3-ը, ձեւակերպվել է 628 տարանցման հայտարարագիր, սպասարկվել՝ 592 բեռնատար տրանսպորտային միջոց եւ 2020 տնտեսվարող սուբյեկտ: Իսկ փոփոխությանը նախորդող համադրելի ժամանակահատվածում լրացվել է 1083 տարանցման հայտարարագիր, որով սպասարկվել է 472 տրանսպորտային միջոց: Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնում որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից եւս էապես կրճատվել է հավաքական բեռների համար «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպումների վրա ծախսվող ժամանակը 50-ից 60 տոկոսով: Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ փետրվարի 24-ից մինչեւ մարտի 3-ը, ձեւակերպվել է 1365 տարանցման հայտարարագիր, որով սպասարկվել են 1279 տրանսպորտային միջոց եւ 1711 տնտեսվարող սուբյեկտ: Իսկ փոփոխությանը նախորդող նույն ժամանակահատվածում Մեղրիի մաքսային կետ-բաժնում լրացվել է 1287 տարանցման հայտարարագիր, որով սպասարկվել է 1054 բեռնատար տրանսպորտային միջոց:

ԿԱՆԽԵԼ ԵՆ

ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Օրերս ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության Շիրակի տարածաշրջանային բաժնի Բավրայի բաժանմունքի աշխատակիցները Հյուսիսային մաքսատուն-վարչության Բավրայի մաքսային կետ բաժնի աշխատակիցների հետ համատեղ մաքսային հսկողության են ենթարկել Վրաստանից Հայաստանի Հանրապետություն ժամանած, Ռուսաստանի Դաշնության գրանցում ունեցող պետհամարանիշերով մարդատար ավտոմեքենան: Ջննման արդյունքում պարզվել է, որ ավտոմեքենան փաստացի տեղափոխող սեփականատիրոջ լիազոր անձի կողմից ՌԴ սահմանային անցակետում լրացված ուղեւորային մաքսային հայտարարագիրը հանդիսանում է հին ձեւանմուշ եւ չի համապատասխանում Ռուսաստանի Դաշնության մաքսային ծառայության պաշտոնական կայքէջում տեղադրված եւ գործող օրենսդրությամբ սահմանված ձեւաթղթին:

Պարզվել է նաեւ, որ տրանսպորտային միջոցի տարբեր հատվածներում առկա չի եղել նախատեսված նույնականացման համարի գործարանային համապատասխան պիտակավորումը:

Մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների կողմից օպերատիվ կապ է հաստատվել ինչպես ՌԴ մաքսային ծառայության գործընկերների, այնպես էլ Վրաստանի մաքսային ծառայության գործընկերների հետ, եւ բանավոր կերպով ստացվել է տեղեկատվություն առ այն, որ վերոնշյալ տրանսպորտային միջոցը իրականում ներմուծվել

է Վրաստան Թուրքիայի Հանրապետությունից չեխական պետհամարանիշերով, իսկ ՌԴ Վերին Լարսի անցակետում նման համարով ուղեւորային հայտարարագիր չի լրացվել:

Այսինքն՝ տվյալ մեքենան վարող քաղաքացին տրանսպորտային միջոցը ՀՀ պետական սահմանով տեղափոխելիս խաբեությամբ օգտագործել է մաքսային եւ այլ փաստաթղթեր, իսկ տրանսպորտային միջոցը չի ունեցել ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ:

Փաստի առթիվ «ՀՀ մաքսային կարգավորման մասին» օրենքի 315-րդ հոդվածի իրավախախտման հատկանիշներով, այն է՝ ՀՀ պետական սահմանով ապրանքների եւ տրանսպորտային միջոցների տեղափոխումը՝ մաքսային եւ այլ փաստաթղթերը կամ մաքսային նույնականացման միջոցները խաբեությամբ օգտագործելով. նախապատրաստվել են նյութեր, որոնք տրամադրվել են ՊԵԿ իրավաբանական վարչություն:

Միաժամանակ, իրավախախտումը հայտնաբերելուց հետո իրականացվել է ուսումնասիրություն վերոնշյալ տրանսպորտային միջոցի եւ դրա սեփականատիրոջ սահմանահատումների մասով: Հավաքագրվել են նմանօրինակ հնարավոր խախտումներ պարունակող դեպքերի ամփոփ տվյալներ՝ ՀՀ տարբեր սահմանային կետերով ներմուծված 11 տրանսպորտային միջոցի մասով, որոնց վերաբերյալ, ինչպես Ռուսաստանի Դաշնային, այնպես էլ Վրաստանի Հանրապետության մաքսային ծառայություններին ուղարկվել են համապատասխան հարցումներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 7-ից 9-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 116 դեպք, որոնցից 10-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

Շուրջ երկու տարի ծագումով Աֆրիկայից՝ Կոտ դ Իվուարից Յաո Սիլվիոն Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի տղաներին ֆուտբոլ խաղալ է սովորեցնում: Սիլվիոյի մասին Հայաստանի « 5-րդ ալիք» հեռուստաընկերությունը հեռուստատեսային ռեպորտաժ է ցուցադրել: Սիլվիոն իր սաներից յուրաքանչյուրից ամսական 3 հազարական դրամ վարձ է վերցնում, հավաքված գումարը ծախսվում է Թեղուտ գյուղում աֆրիկացի մարզչի վարձակալած բնակարանի վարձավճարի եւ կոմունալ ծախսերը հոգալու համար: Թեղուտ բնակավարի վարչական ղեկավար Վախթանգ Թամրազյանը հայտնեց, որ Սիլվիոն Թեղուտ է տեղափոխվել Դիլիջան քաղաքից, նա որպես ֆուտբոլիստ հանդես է եկել Երեւանի «Ալաշկերտ» ֆուտբոլային թիմի, Վանաձորի թիմի կազմում: Վարչական ղեկաավարը հայտնեց, որ ինքը եւ Թեղուտի բնակիչները ինչքան կարողանում, օգնում են Սիլվիոյին ձմռան վառելափայտի, կենցաղային այլ հարցերում, սակայն Սիլվիոյի մեծ ցանկությունն է Թեղուտ գյուղում ունենալ ֆուտբոլի մեծ, իսկական խաղադաշտ, քանի որ այն խաղադաշտը, որտեղ աֆրիկացի մարզիչը պարապում է թվով շուրջ քսան թեղուտցի տղաների հետ, փոքր է, չի համապատասխանում ֆուտբոլի խաղադաշտի չափանիշներին: «Ֆեյսբուք»-ում գումարների հանգանակություն է սկսվել աֆրիկացի մարզչի մանկապատանեկան թիմին՝ «Տավուշ սպորտ կլուբին» օգնելու համար: Հասարակական գործիչ Էդգար Խաչատրյանը «Ֆեյսբուք»-ի իր էջում հայտնել է, որ «Ագբա» բանկում բացված համապատասխան հաշվեհամարին հավաքված գումարն ուղղելու են Թեղուտի պատանի ֆուտբոլիստների մարզական պարապմունքների համար նախատեսված մարզական պարագաներ գնելու համար: Նա տեղեկացրել է, որ արդեն հանգանակվել է 100 հազար դրամ, իրենք մարտի 12-ին Երեւանից մեկնելու են Թեղուտ: Թեղուտի վարչական ղեկավարն ասաց, որ աֆրիկացի երիտասարդ մարզիչը հասկանում եւ խոսում է հայերեն: Նրանից իմանալով Սիլվիոյի բջջային հեռախոսահամարը՝ զանգահարեցի, սակայն աֆրիկացի մարզիչը չպատասխանեց: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան ղեկավարում է Արմեն Մելիքբեկյանը, ով արմատներով Տավուշի մարզի Աչաջուր գյուղից է: Հայաստան ֆուտբոլի ֆեդերացիան հսկայական գումարներ է ստանում ՈՒԵՖԱ-ից, ՖԻՖԱ-ից, Հայաստանի պետական բյուջեից, սակայն բավարար ուշադրություն չի դարձնում Հայաստանի մարզերում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանը: 2018 թվականի իշխանափոխությունից առաջ՝ 2018-ի մարտ ամսին, սկսվել էր Բերդ համայնքի սահմանամերձ Ներքին Կարմիրաղբյուր գյուղի ֆուտբոլի մարզադաշտի վերակառուցումը, որն անցած հնգամյակում չի ավարտվել: ՀՖՖ-ն ինչո՞ւ չի լուծել Թեղուտի մանկապատանեկան թիմի աֆրիկացի մարզչի աշխատավարձի, նրա բնակարանի վարձի, կոմունալ ծախսերի փոխհատուցման, Թեղուտ գյուղի մանկապատանեկան թիմին մարզական գույքով ապահովելու խնդիրը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ 2022Թ.-Ի ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Մարգսյանը սոցիալական ցանցի իր էջում ներկայացրել է ՀՀ կառավարության կողմից 2022 թվականին Գեղարքունիքի մարզում իրականացված սուբվենցիոն ծրագրերի ամփոփումը:

Ըստ նրա՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար գյուղում 2022 թվականին իրականացվել է սուբվենցիոն 5 ծրագիր, որոնց արդյունքում կառուցվել է մանկապարտեզի խաղահրապարակը եւ սեպտիկ հորը, 2-րդ թաղամասի 6-րդ փողոցի լուսավորության ցանցը, ներհամայնքային ոռոգման առուներ, ասֆալտապատվել է ներհամայնքային 2 փողոցը, հիմնանորոգվել է մշակույթի կենտրոնի շենքը:

«2020 թվականին Ծովինարի մանկապարտեզի հիմնանորգման ծրագիրը սկսվել է 2019 թվականից եւ ընթացել մի քանի փուլերով, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

2019 թվականին Ծովինարի մանկապարտեզի հիմնանորոգմանը հատկացվել է 28,8 միլիոն, 2020 թվականին՝ 40 միլիոն, 2021 թվականին՝ 28,5 միլիոն, 2022 թվականին՝ 61,5 միլիոն դրամ: Նախորդ երեք տարիների ընթացքում ավարտի են հասցվել հիմնանորոգման, ինչպես նաեւ ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները, իսկ 2022 թվականին տրամադրած միջոցներով ավարտվել են բակային տարածքի բարեկարգման, խաղահրապարակի եւ սեպտիկ հորի կառուցման աշխատանքները: Ծովինարի մանկապարեզի հիմնանորոգման 2022 թվականի ավարտական փուլի համար տրամադրված գումարի 75 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծովինարի մանկապարտեզն այս ուսումնական տարում իր դռները կբացի գյուղի նախադպրոցական տարիքի 100 երեխաների առջեւ: Մանկապարտեզի գործունեությունը դադարեցվել էր 2005 թվականից շենքային անբավարար պայմանների պատճառով:

2021 թվականին Ծովինարի ներհամայնքային փողոցների ասֆալտապատման ծրագրի իրականացման պայմանագրային արժեքը կազմել է 101 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ասֆալտապատմամբ հիմանորոգվել է 1-ին թաղամասի 9-րդ փողոցը եւ 2-րդ թաղամասի 6-րդ փողոցը՝ շուրջ 1200 գծամետր երկարությամբ եւ 5 հազար քառակուսի մետր մակերեսով»,- գրել է Սարգսյանը:

Ըստ մարզպետի՝ 2022 թվականին Ծովինար գյուղի 2-րդ թաղամասի 6-րդ փողոցի լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 6 միլիոն 562 հազար դրամ, որի 60 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Լուսավորության ցանցը կառուցվել է 600 գծամետր երկարությամբ: Տեղադրվել է ԼԵԴ համակարգով աշխատող 30 լուսատու: 2023 թվականին էլ Ծովինարի ոռոգման առուների կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 32 միլիոն 280 հազար դրամ, որի 70 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ոռոգման առուների ներքին ցանց է կառուցվել 2-րդ թաղամասի 6-րդ փողոցում շուրջ 700 գծամետր երկարությամբ, երկաթբետոնյա վաքերով եւ մետաղական խողովակներով:

Սարգսյանը նաեւ ներկայացրել է 2024 թվականի սպասվելիք ծրագրերը. «Ծովինարի մշակույթի կենտրոնի հիմանորոգման պայմանագրային արժեքը կազմել է 19 միլիոն 980 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում մշակույթի կենտրոնում իրականացվել են ներքին հարդարման աշխատանքներ: Մշակույթի կենտրոնի հիմնանորոգման ավարտական փուլը կիրականացվի 2023 թվականին նախատեսված սուբվենցիոն ծրագրով»,- մանրամասնել է նա:

ԼՈՒՐԵՐ

ԿՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը վարորդներից ստանում է առաջարկներ՝Յյուսիս-հարավ ճանապարհի Թալին-Լանջիկ ասֆալտապատված հատվածում երթեւեկության սահմանված արագությունը բարձրացնելու վերաբերյալ:

«Նշված ճանապարհահատվածում սահմանված է 70կմ/ժ արագություն, եւ սահմանափակումները պայմանավորված են դեռեւս շարունակվող որոշ շինարարական աշխատանքներով: Աշխատանքները ծրագրված է ամբողջովին ավարտել սույն թվականի օգոստոսին, որից հետո կվերականգնվի բնականոն երթ–եկությունը, եւ կվերանայվի սահմանված արագությունը:

«Տեղեկացնենք, որ այն ճանապարհահատվածներում, որտեղ իրականացվում են շինարարական աշխատանքներ, երթեւեկության արագությունը սահմանվում է ըստ Ժամանակավոր երթեւեկության կազմակերպման պլանի, որը համաձայնեցվում է ՀՀ ՆԳՆ-ի հետ՝ շինարարության ընթացքում ճանապարհային երթեւեկության անվտանգությունն ապահովելու նպատակով:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը, կարեւորելով ճանապարհային անվտանգությունը, հայցում է վարորդների ներողամտությունը պատճառված անհանգստության եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար», - նշված է հաղորդագրությունում:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՈՐՈՇՈՒՄ

Կառավարությունն իր մարտի 9-ի նիստում ընդունել է որոշում, որի արդյունքում համապատասխան կարգի գործարկմամբ արտադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների շաբաթական ծանրաբեռնվածությունը 1 դրույքաչափի համար (անկախ կազմակերպաիրավական կարգավիճակից) կլինի միասնական եւ կունենա պետության կողմից կազմակերպական եւ ֆինանսական հստակ հիմքեր:

Ըստ հիմնավորման՝ քիչ չեն դեպքերը, որ որոշ համայնքային արտադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողները վարձատրվում են ոչ թե շաբաթական, այլ խմբերի կամ երեխաների քանակի հիմքով:

Վիճակագրության համաձայն՝ 2021/2022 ուսումնական տարում հանրապետությունում գործել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի եւ մանկապատանեկան ստեղծագործական 240 դպրոց եւ կենտրոն, որոնցից 50-ը ք. Երեւանում, իսկ մնացած 190-ը՝ ՀՀ մարզերում: Արտադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների շաբաթական ծանրաբեռնվածության համար անհրաժեշտ է ապահովել մեկ միասնական մոտեցում, հստակ սահմանելով 1 դրույքաչափի համար նախատեսված ծանրաբեռնվածությունը, որը ուղիղ կապ ունի նաեւ վերջիններիս վարձատրության եւ աշխատանքի պատշաճ կազմակերպման եւ անցկացման գործընթացների հետ:

● Անցած 2 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 16 ճՏՊ. 41 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Կառավարությունն իր մարտի 9-ի նիստում փոփոխություններ եւ լրացումներ է կատարել նախկինում ընդունած որոշման մեջ՝ ««Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունմամբ պայմանավորված:

Հիմնավորման համաձայն՝ օրենքով նոր պայմաններ են սահմանվել մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունքի իրացման շրջանակում: Ըստ այդմ՝ առաջարկվում է տարանջատել տարածքային բաժնի կողմից խնամքի նպաստ նշանակելը մերժելու դեպքերը՝ծնողի կատեգորիայով պայմանավորված (մինչեւ 2023 թ. ծնված երեխայի դեպքում՝ աշխատող եւ գյուղաբնակ, եւ 2023 թ. հունվարի 1-ին եւ դրանից հետո ծնված երեխայի խնամքի կապակցությամբ):

Սահմանվել է, որ, բացի ինքնաշխատ եղանակից, խնամքի նպաստի չափը փոխվում է նաեւ այն դեպքում, երբ ներկայացվել է ծնողի վերաբերյալ տեղեկատվությունը որպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն լինելու վերաբերյալ տեղեկանքը, կամ գործատուն գրանցման հայտով ճշտել է խնամքի արձակուրդն ավարտվելու (ընդհատվելու) մասին տեղեկատվությունը: Սահմանվել է նաեւ, որ ծնողի մահվան դեպքում երեխայի մյուս ծնողին նշանակվում է խնամքի նպաստ, եթե դիմումը ներկայացնելու ամսվա 1-ի դրությամբ այդ ծնողն ունի խնամքի նպաստի իրավունք:

ՏՈՒՐԻԶՄԸ ԿՐԿՆԱԿԻ ԱՎԵԼԱՑԵԼ Է

2022թ. գրանցվել են ոչ վատ ցուցանիշներ. Հայաստան է այցելել ավելի քան 1,66 մլն տուրիստ. այլ բան է, թե ինչ պայմաններում է այս թիվը գոյացել՝ կրկնապատկվելով 2021թ. համեմատ. այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ մարտի 9-ին ասել է Հայաստանի տուրիզմի ֆեդերացիայի նախագահ Մեխակ Ապրեսյանը:

Ապրեսյանը նշել է, որ 2022թ. այցելությունների մեծ մասը բաժին է ընկել Ռուսաստանի զբոսաշրջիկներին, մասնավորապես՝ ռուսաստանցիների այցելությունների երկու ալիքներին: «Առաջինը՝ 2021թ. փետրվար-մարտին, երբ նոր էր սկսվել ուկրաինական ճգնաժամը: Երկրորդ ալիքը պայմանավորված էր Ռուսաստանում հայտարարված զորահավաքով: Այդ երկու ալիքներին բաժին է ընկել մոտ 100-120 հազար այցելություն»,- նշել է փորձագետը: Նա հիշեցրել է, որ Հայաստանի կառավարությունը նպատակ է դրել մինչեւ 2026թ. կրկնապատկել այցելությունների թիվը՝ հասցնելով 2,5 մլն մարդու՝ կարծիք հայտնելով, որ արդեն այս տարի ցուցանիշը կարող է մոտենալ 2019թ. տվյալներին (1,9 մլն տուրիստ), իսկ 2,5 մլն ցուցանիշը հանգիստ կարելի է ապահովել առաջիկա երկու տարվա ընթացքում: Մեխակ Ապրեսյանը վստահություն է հայտնել, որ Թուրքիայի հետ սահմանի բացումը եւ հաղորդակցությունների ապաշրջափակումը կարող են լուրջ սպառնալիք հանդիսանալ Հայաստանի համար, եթե դրան պատրաստ չլինենք:

ՈՐՈՇՈՒՄ

ԿՀՍՏԱԿԵՑՎԵՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես ArmLur.am-ը տեղեկանում է կառավարության տարածած հաղորդագրությունից, գործադիրը հավանություն է տվել ««ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթին: Օրինագծերի ընդունումը պայմանավորված է պաշտպանության ոլորտի բարեփոխումների օրենսդրական ապահովման իրականացնելու անհրաժեշտությամբ: Օրինագծերի փաթեթի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» եւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքներում հստակեցվում են կարգապահական եւ զինվորական ծառայության կազմակերպման հետ կապված հարաբերությունները. վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում վարչական պատասխանատվություն է սահմանվում զինծառայողների համար նախատեսված զինվորական համազգեստը զինվորական ծառայության մեջ չգտնվող եւ զինվորական համազգեստ կրելու իրավունք չունեցող անձի կողմից կրելու, ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմինների կողմից պաշտպանության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցները տեխնիկապես սարքին եւ շահագործման համար պիտանի վիճակում չպահելու կամ սահմանված կարգով տրանսպորտային միջոցների ներգրավումից խուսափելու համար:

Ըստ հիմնավորման՝ մասնավորապես՝ անհրաժեշտություն է առաջացել օրենքում հստակեցնել զորահավաքային զորակոչի միջոցով զորահավաքային զինվորական ծառայություն անցնող կամ վարժական հավաքների կանչված զինծառայողների նկատմամբ խրախուսանքներ եւ կարգապահական տույժեր կիրառելու շրջանակը, կարգապահական տույժերի տեսակների ցանկում աշխատանքի արտահերթ վերակարգի փոխարեն նախատեսել զինծառայողի ամսական պաշտոնային դրույքաչափից պահում՝ մինչեւ 30 տոկոս չափով եւ մինչեւ երեք ամիս ժամկետով, հստակեցնել կարգապահական տույժերի ընտրության կարգը եւ կարգապահական տույժերի բողոքարկման ընթացակարգը, կանոնագրքում իրականացնել մի շարք այլ բնույթի հստակեցումներ եւ կարգավորումներ:

Առկա իրողություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել նաեւ կարգապահական իրավախախտումների տեսակները լրացնել զինծառայողի կողմից օրենքով սահմանված սահմանափակումները չպահպանելու, ինչպես նաեւ գաղտնիության ռեժիմի պահպանման կանոնների խախտումների համար պատասխանատվություն սահմանող հոդվածներով:

Ն.Հ.

ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՆԵՆ

ԱԶԱՏՎԵՑԻՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻՑ

Կառավարությունն իր մարտի 9-ի նիստում գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում մաքսատուրքից ազատեց մի քանի ընկերություններ:

Մասնավորապես, մաքսատուրքից ազատվեց «ԲԻՈՔՈԹՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

«ԲԻՈՔՈԹՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել խոնավ հիգիենիկ անձեռոցիկների, բամբակյա սկավառակների, բժշկական բամբակի եւ բամբակյա ջոփիկների արտադրության համար:

Արտադրությունն իրականացվելու է Երեւանում: Ընկերությունը հիմնադրվել է 2015 թվականին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 4.3 մլրդ դրամի ներդրում հումքի ձեռք բերման համար: Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 40 նոր աշխատատեղ՝ մինչեւ 100-130 հազար դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 4.3 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 241 մլն դրամ:

Կառավարության մեկ այլ որոշմամբ՝ մաքսատուրքից ազատվեց «ԱՐՄԵՆԻԱՆ ՀԵԼԻՔՈՓԹԵՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Այս ընկերության կողմից ներմուծվող սարքավորումով նախատեսվում է ընդլայնել ծառայությունների տեսակները՝ որոնողափրկարարական, գյուղատնտեսության, հակահրդեհային, քարտեզագրման, ուղեւորափոխադրման, զբոսաշրջության ոլորտներում: Ծառայությունները մատուցվելու են ՀՀ տարածքում: Ընկերությունը հիմնադրվել է 2018 թվականին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 1,27 մլրդ դրամի ներդրում ուղղաթիռի ձեռք բերման համար: Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 2 նոր աշխատատեղ՝ մինչեւ 550-600 հազ դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 1.27 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 127 մլն դրամ:

Կառավարությունն իր մեկ այլ որոշմամբ մաքսատուրքից ազատեց «ՄԻԼԼԿԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Հիմնավորման մեջ նշվում է, որ «ՄԻԼԼԿԱԹ»-ի կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել սերուցքային կարագի արտադրության համար: Արտադրությունն իրականացվելու է ՀՀ Երեւան քաղաքում: Ընկերությունը հիմնադրվել է 2000 թվականին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 29 մլրդ դրամի ներդրում հումքի ձեռք բերման համար: Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 10 նոր աշխատատեղ՝ 170 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձով:

Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 29 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 4.4 մլրդ դրամ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԵՐՈՍԱԾԻՆ ՄԱՅՐԵՐ

ՀԱՅ ՀԱՅՏՆԻՆԵՐՆ ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ ՄԱՐՏԻ 8-Ը

Մարտի 8-ին ամբողջ աշխարհում տոնվում էր կանանց միջազգային տոնը: Հայաստանում մեկնարել է կանանց միամսյակը. մեկամսյա տոն, որն էլ ավելի է գեղեցկացնում եւ նոր երանգ հաղորդում գարնան զարթոնքին: Մարտի 8-ին, ավանդության համաձայն, գեղեցիկ սեռի ներկայացուցիչները տղամարդկանց կողմից ստանում են հատուկ ուշադրություն, ծաղիկներ եւ նվերներ: Այսպիսով, ArmLur.am-ը ներկայացնում է, թե հայ հայտնիներից ով ինչպես է շնորհավորել Մարտի 8-ը:

Երգչուհի Սիրուշոն հայտնել է, որ եկել է Հայաստան՝ հրապարակելով «Սթորի» ինստագրամյան իր էջում: «Վերադառնում ես Հայաստան, նորությունները կարդում, ու ո՛չ Մարտի 8-դ է գալիս, ո՛չ նորաձեւության շաբաթը: Սա է դարձել մեր իրականությունը, որի մեջ սովորում ենք ապրել: Շնորհավոր մեր բոլոր ուժեղ ու պայքարող կանանց տոնը»,- գրել է նա:

«Գարնանամուտի այս տոնի՝ Մարտի 8-ի խորհուրդն ընդգրկում է նաեւ կնոջ ակտիվ դերը հանրային կյանքում, պայքարն իր իրավունքների եւ ազատ կամքի դրսեւորման համար: Թող բարին ու հաջողությունը լինեն մեր մշտական ուղեկիցն ամենուր: Եղե՛ք նախաձեռնող»,-գրել է դերասանուհի Ծովինար Մարտիրոսյանը:

Գարիկ Պապոյանի կինը՝ Մարիաննա Վարդանյանը, հրապարակել է աղջիկների հետ լուսանկար՝ շնորհավորելով կանանց եւ աղջիկների Մարտի 8-ը: «Շնորհավոր, սիրելի՛ կանայք, մայրե՛ր, քույրե՛ր: Լիքը սեր եմ մաղթում բոլորիս: Խնդրում եմ, ինձ մի՛ tag-եք այնպիսի post-երի վրա, որտեղ ասվում է «կանանց տոնը 1 օր չէ, այլ տարին 365 օր»: Նախ արդարության համար ֆիքսենք, որ կանանց եւ աղջիկների տոն գոնե կա, իսկ տղամարդկանց կամ հայրերի օր մեզ մոտ չկա: Ես սրտանց ուզում եմ, որ հատուկ օրեր չլինեն հրար հարգելու, սիրո խոսքեր ասելու համար, բայց եթե 365 օր տոն լինի, դա չի լինի յուրահատուկ, այլ կլինի սովորական: Դրա համար կա ծնունդ, Մարտի 8, որպեսզի մենք մեզ special զգանք եւ ապրենք յուրահատուկ զգացողություններ, օրը լցվի գեղեցկությամբ, ծաղիկներով, սիրով»- գրել է նա:

Հաղորդավարուհի Նազենի Հովհաննիսյանը գրել է. «Մնում է հասկանանք՝ վերջը մարտի 7, մարտի 8, թե, օրինակ, ասենք, մարտի 9-ը: Հիմա լուրջ. ամեն ինչ հնարավոր է կյանքում՝ ահավոր վատից մինչեւ անասելի լավը, անսպասելի երջանկությունից մինչեւ անհավանական սերը: Ամեն բան: Բայց կարեւորագույնը՝ բոլոր ցավերից ու կորուստներից հետո անգամ երեխայի պարզությամբ ժպտացող կինն է: Արցունքները աչքերի փայլի հետեւում թաքցրած, ժպտացող կինը, էն կինը, որն ընկեր է, բժիշկ կամ հոգեբան, տնային տնտեսուհի կամ օսկարակիր դիվա, հերոսածին մայր է կամ լռությամբ քեզ հասկացող քույր, քո երեխան է կամ երեխայիդ մայրը: Կինն է, որը կողքիդ է, ինչ էլ որ լինի, ով էլ որ լինես, որքան էլ որ մոլորվես կամ վերաձեւավորվես: Ուղղահայաց ութը հորիզոնական ամվերջությունն է: Մարտի ութը կնո՛ջ անվերջության նշանն է, աշխարհի գոյաբանական իմաստի ու անհատնում սիրո անվերջությունն է, համբերության ու ներումի՛ անվերջությունն է, չսպառվող Սիրո ու նոր ծնունդի հավերժությունն է: Չգիտեմ՝ այս տոնն ինչի մասին է, բայց հստակ գիտեմ, թե կինն ինչի մասին է: Հերոսածին մայրերի եւ մայրերի օրհնված ամեն վայրկյանը բոլոր հավերժություններում շնորհավոր: Կարոտի անվերջությունը միայն սիրո հավերժությամբ կփարատվի: Մենք սիրում ենք Քեզ»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵՑ

«ԿԻՆՆ ԻՄ ՄՈՒՍԱՆ Է» ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 8-ին Առնո Բաբաջանյան համերգասրահի ներքնահարկում բացվեց ՀՀ վաստակավոր նկարիչ Վլադիմիր Աբրահամյանի «Կինն իմ մուսան է» ցուցադրությունը: Կանանց միջազգային օրվա առթիվ սրահում հավաքվել էին Վ. Աբրահամյանի խորհրդավոր կանայք. ցուցադրվեցին նկարչի վրձնած կանանց դիմանկարները, նաստյուրմորտներ: Վլադիմիր Աբրահամյանի ստեղծագործությունը հարուստ է կանանց կերպարներով. դրանք հիմնականում իրական կերպարներ են, բայց բոլորը բնորդուհիներ չեն, կան նաեւ երևակայական, հորինված կերպարներ:

Վլադիմիր Սմբատի Աբրահամյան (նոյեմբերի 25, 1941, Բջնի, Ախտայի շրջան, Հայկական ԽՍՀ, ԽՍՀՄ - հուլիսի 8, 2020[1], Երեւան, Հայաստան)՝հայ նկարիչ, ՀՀ վաստակավոր նկարիչ (2013): 1966 թվականին ավարտել է Երեւանի գեղարվեստի ուսումնարանը, 1971 թվականին՝ Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: 1973-1976 թվականներին դասավանդել է գեղարվեստաթատերական ինստիտուտում: 1975 թվականից Հայաստանի նկարիչների միության անդամ է: 1980-1991 թվականներին եղել է ՀՀ ռադիոհեռուստապետկոմի գրական-գեղարվեստական հաղորդումների բեմադրող-նկարիչ, 1995-1999 թվականներին՝ «Արեւիկ» հրատարակչության գեղարվեստական խմբագիր, 1993-1995 թվականներին եղել է ՆԳ «02» շաբաթաթերթի գեղարվեստական խմբագիր: 1999 թվականից դասավանդում է Երեւանի գեղարվեստի ուսումնարանում: Վլադիմիր Աբրահամյանի ստեղծագործությունները գտնվում են Հայաստանի տարբեր թանգարաններում, անհատական հավաքածուներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Լիբանան):

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔ

Կայացել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության փորձագիտական հանձնաժողովի՝ այս տարվա առաջին նիստը: Նիստում նորահայտ հուշարձանի կարգավիճակ են տրվել Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում գտնվող «Կադաստրի կոմիտեի շենք», Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի տապանաքարեր «Մելիք Մանուչարի» եւ «Գրիգորի», Սյունիքի մարզի Վարդանիձոր գյուղի «Դամբարանադաշտ» եւ Վայոց ձորի մարզի Սարավան գյուղի «Խոյատապան ճանողուլի» պատմամշակութային արժեք ներկայացնող շինություններին: Նիստում քննարկվել է նաեւ 28 հուշարձանի պահպանական գոտիների նախագծերին համաձայնություն տալու հարցը: Դրանց թվում են պատմության եւ մշակույթի այնպիսի կարեւորագույն հուշարձանների պահպանական գոտիների նախագծեր, ինչպիսիք են Երեւան քաղաքի Ավան վարչական շրջանում գտնվող «Սբ Աստվածածին» (IV-VI դդ., վերակառուցվել է X-XIV դդ.) եւ «Սբ Հովհաննես» (V-VI դդ.) եկեղեցիները, Շենգավիթ վարչական շրջանի եկեղեցական համալիր Նորագավթի Սբ Գեւորգ (Ծիրանավոր Սբ Գեւորգ) (IV-VII դդ., XIII-XVII դդ.) եկեղեցական համալիրը, Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի «Վերածնունդ» (1980 թ.) հուշահամալիրը եւ Ողջաբերդ գյուղի «Չարենցի կամար» հուշարձանը (1957 թ.), Սյունիքի մարզի Հացավան գյուղի «Վասակաբերդ» (V դ.) ամրոցը եւ այլն: Ըստ սահմանված կարգի՝ այդ գոտիները կուղարկվեն համայնքների ղեկավարների եւ տարածքային կառավարման պետական մարմինների համաձայնեցմանը: Դրական եզրակացություն է տրվել ՀՀ Տավուշի մարզի Ենոքավան գյուղի վարչական տարածքում գտնվող Գետահովիտ-1 եւ Գետահովիտ-2 քարայր-բնակատեղիներն ու հարակից տարածքներն օգտագործման հանձնելու հարցին:

ԿՍՏՈՐԱԳՐՎԵՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային երկօրյա այցով մեկնել է Վրաստան երկկողմ համագործակցության եւ համատեղ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր քննարկելու նպատակով: Վրաստան աշխատանքային այցի շրջանակում նախատեսվում է ստորագրել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության միջեւ կրթության եւ գիտության ոլորտում համագործակցության մասին» հուշագիր, ինչպես նաեւ փոխըմբռնման հուշագիր Երեւանի պետական համալսարանի եւ Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի միջեւ: Եվս մեկ հուշագիր կստորագրվի Երեւանի Վարդգես Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոցի եւ Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի միջեւ համագործակցության վերաբերյալ: Աշխատանքային այցի ընթացքում կստորագրվի նաեւ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության գործերի նախարարության միջեւ Հայաստանում եւ Վրաստանում փոխադարձ մշակույթի օրերի անցկացման մասին» փոխըմբռնման հուշագիր:

● *Մարտի 11-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սպիտակաձյունիկը եւ յոթ թզուկները» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 14:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ փոխել սոցիալական փաթեթի իմ հաշիվը: Խնդրում եմ ներկայացնել մանրամասն:

Գրիգոր Ջալիբեկյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ յուրաքանչյուր բյուջետային տարվա սոցիալական փաթեթի գումարների փոխանցման համար լրացվում է նոր դիմում: Սոցփաթեթի հաշիվը կարելի է փոխել միայն նոր բյուջետային տարում՝նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը: Այս դեպքում աշխատողը դիմումի հետ միասին ներկայացնում է նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք, ինչպես նաեւ սոցփաթեթի նախկին հաշիվը սպասարկող բանկից տեղեկանք՝ պարտավորություններ չունենալու վերաբերյալ: Սոցփաթեթի հաշիվը փոխելու դեպքում աշխատողն իր հաշվի դրամական միջոցները սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկից սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկ փոխանցելու համար նախկին բանկ է ներկայացնում նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք: Այդ տեղեկանքի հիման վրա սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկն աշխատողի սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները փոխանցում է սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկի սոցփաթեթի հաշվին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները հնարավոր է կանխիկացնել կամ փոխանցել ցանկացած ուղղություններով միայն աշխատողի կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու եւ սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման ժամանակ (երբ դադարում է նրա՝ սոցիալական փաթեթ ստանալու իրավունքը, եւ նրա սոցփաթեթի հաշվին առնվազն երեք ամիս սոցիալական փաթեթի գումարների փոխանցումներ չեն կատարվել) կամ աշխատողի մահվան դեպքում ժառանգի կողմից սոցփաթեթի հաշվում առկա միջոցներն օրենքին համապատասխան ժառանգաբար նրան անցնելու դեպքում:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կարելի՞ է արդյոք արտոնագիր վերցնել կոնկրետ օրերի համար, թե՞ ոչ:

Հասմիկ Կետիկյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հավելվածի դրույթների 12-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց կողմից բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված, Երեւան քաղաքում եւ մարզկենտրոններում՝ 300 մ2 եւ ավելի, այլ քաղաքներում եւ այլ վայրերում՝ 200 մ2 եւ ավելի, սահմանամերձ գյուղերում 100 մ2 եւ ավելի մակերես ունեցող սրահներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու դեպքում կարող է տրամադրվել արտոնագիր որեւէ ամսվա օրվա կամ օրերի համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ «Արտոնագրային վճարների մասին» օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր գործունեության տեսակի մասով յուրաքանչյուր ժամանակահատվածի եւ յուրաքանչյուր գործունեության իրականացման վայրի համար տրվում է առանձին արտոնագիր:

Ի դեպ, ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու, գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու դեպքերում վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում եւ չեն վերադարձվում՝ անկախ այն բանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Մեծամորում

ՀՀ 2023 թ. երիտասարդական մայրաքաղաք Մեծամորում բացվել է երիտասարդական կենտրոն, որն անվանակոչվել է Սպարապետ Վազգեն Սարգսյանի անունով:

Մեծամորի երիտասարդական կենտրոնի բացումն իրականություն է դարձել «Մեծամորի երիտասարդական խորհրդարան» ՀԿ-ի նախաձեռնությամբ եւ Մեծամորի համայնքապետարանի աջակցությամբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: